ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 25–26-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված անվանի պատմաբան, գիտության տաղանդավոր կազմակերպիչ և հասարակական գործիչ, «Պատմաբանասիրական հանդեսի» հիմնադիր խմբագիր, ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի 100-ամյակը:

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը*: Մ. Ներսիսյանը մեծ վաստակ է ունեցել ակադեմիայում, եղել է ոչ միայն գիտության, այլ նաև՝ կրթության կազմակերպիչներից: Նա պատմագիտության ասպարեզում մեծ ավանդ է թողել, մանավանդ՝ այնպիսի հարցերում, ինչպիսիք են թուրքագիտությունը, հայ-թուրքական հարաբերությունները. «Ես հիշում եմ, որ շատ ծանր ժամանակաշրջանում նա խմբագրեց «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (ռուսերեն՝ 1966 թ., հայերեն՝ 1991 թ.), որը լայն շրջանների համար առաջինն էր, և ինքս մեծ հետաքրքրությամբ եմ կարդացել և առաջին պատկերացումը կազմել ժամանակաշրջանի մասին»: Մ. Ներսիսյանը Երևանի պետական համալսարանի ռեկտոր եղավ այն շրջանում, երբ մեր բարձրագույն կրթությունը ցածր մակարդակից անցում էր կատարում դեպի ավելի բարձր մակարդակ: Հենց այդ շրջանում էր, որ մեր բարձրագույն կրթությունը հասավ իսկապես բարձրագույն մակարդակի՝ և՛ կազմակերպչական, և՛ բովանդակային իմաստով: Լինելով պատմության մասնագետ, նա կարողանում էր նաև հասկանալ, թե որոնք են բնական գիտության այն բնագավառները, որ տվյալ ժամանակի և հետագա տարիների համար պիտի զարգացում ունենան: Սուր և ճշմարտախոս բնավորություն ուներ, չէր կարողանում հաշտվել բացթողումների հետ, և մեր մտավորականության համար օրինակելի մարդ էր:*

Մկրտիչ Ներսիսյանի կյանքի ու գիտական գործունեության մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը*: «Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը հայագիտության այն սերնդի լավագույն ներկայացուցիչներից էր, որոնք աշակերտեցին հին սերնդի փայլուն համաստեղությանը՝ Հակոբ Մանանդյանին, Մանուկ Աբեղյանին, Հովսեփ Օրբելուն, Հրաչյա Աճառյանին, Ստեփան Մալխասյանին, Գրիգոր Ղափանցյանին և ուրիշների: 1930-ական թվականներին ասպարեզ մտնելով, այդ սերունդը աստիճանաբար իր ուսերի վրա վերցրեց գիտության զարգացման ծանր բեռը: Վերջիններս կարողացան հավատարիմ մնալ իրենց ուսուցիչների ավանդներին՝ ազգային պատմության հարցերը փաստական նյութի հիման վրա ճշմարտացի լուսաբանելու սկզբուն-*

քին: Մ. Ներսիսյանը շուրջ յոթանասուն տարի, մեծ եռանդով, անդուլ գործունեություն ծավալեց պատմագիտության, գիտակազմակերպական և ուսումնադաստիարակչական ասպարեզներում և ամենուր պատկառելի վաստակ ունեցավ»:

Այնուհետև լսվեցին մի շարք զեկուցումներ: Ա. Խառատյանը *հանդես եկավ «Օսմանյան Թուրքիան ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի աշխատություններում» թեմայով,* Ռ. Սահակյանի *զեկուցման թեման էր՝ «Ինքնապաշտպանական կռիվները Մ. Գ. Ներսիսյանի գնահատմամբ (1890–ական թվականներին և 1915 թվին)»,* Մ. Մուրադյանինը՝ *«Հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրությունը Մ. Գ. Ներսիսյանի աշխատություններում»:* Մ. Կարապետյանը *հանդես եկավ «Մ. Գ. Ներսիսյանը Հայոց ցեղասպանագիտության հիմնադիր» զեկուցմամբ:*

Նոյեմբերի 26-ին գիտական նստաշրջանը շարունակեց իր աշխատանքները: Ա. Մելքոնյանը *հանդես եկավ «Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականությունը Այսրկովկասում XIX դարի առաջին երեսնամյակում» թեմայով,* Շ. Կարամանուկյանը, Ա. Գասպարյանը՝ *«XX դարի սկզբի ռուս-արաբական փոխառնչությունների վավերագրերը Մ. Գ. Ներսիսյանի արխիվում» զեկուցմամբ:* Պ. Մուրադյանի *զեկուցման թեման էր՝ «Ակադ. Մ. Գ. Ներսիսյանի բնագրական հրապարակումները»,* Ռ. Սաֆրաստյանինը՝ *«Թուրքիայի բռնապետական քաղաքականությունը թուրքահպատակ ժողովուրդների նկատմամբ»:* Պ. Հովհաննիսյանը *հանդես եկավ «Մ. Գ. Ներսիսյանի գիտահրատարակչական գործունեությունը» զեկուցմամբ,* Է. Մելքոնյանը՝ *«Հայ ազգային-ազատագրական շարժման հարցը Մ. Գ. Ներսիսյանի պատմագիտական հայեցակարգում» թեմայով:*

Գիտական նստաշրջանում շնորհակալական խոսքերով հանդես եկան Մ. Ներսիսյանի ընտանիքի անդամները: Գիտաժողովի աշխատանքն ամփոփեց Վ. Բարխուդարյանը: